

ԱՆՏԻՈՔԻ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՁԸ և ԱԵՆԱՏԱՆՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Անտիոք». Սա հյուսիսային Սիրիայի նշանավոր քաղաքը չէ, որտեղից նրանք ճանապարհ ընկան (համար 1), այլ փոքր Ասիայի Պիսիդիայի նահանգի մի քաղաք, որ Հռոմեական գաղթավայր էր և միաժամանակ առևտրական կարևոր կենտրոն, որտեղ բավական մեծ Հրեական գաղութ կար:

Նոր Կտակարանում **Անտիոքը առաջին անգամ հիշատակվում է Գործք Առաքելոցի 6-րդ գլխում**. Առաքյալների կողմից ընտրված յոթ օգնականներից Նիկողայոսը հեթանոսական միջավայրից էր՝ անտիոքացի, և մկրտվելով՝ քրիստոնեություն էր ընդունել:

Քրիստոնյաների հալածանքների ժամանակ, որը սկսվեց Ստեփանոսի նահատակությամբ, Երուսաղեմի համայնքի անդամները փախան և հաստատվեցին Անտիոքում (Գործ. 11:19): Քրիստոսի հետևորդները առաջին անգամ «քրիստոնյա» են կոչվում հենց Անտիոքում (Գործ. 11:26): Այստեղ նրանք Տիրոջ խոսքը քարոզում էին հիմնականում հրեաների շրջանում, ապա նրանց են միանում նորադարձ կիպրացիներ և կյուրենացիներ (հս. Աֆրիկա)՝ Փրկչի մասին ավետարանելով հեթանոս հույներին (Գործ. 11:19-20): Անտիոքում հիմնադրվում է մեծ և գործուն Եկեղեցի. այս մասին լուրը հասնում է Երուսաղեմի Եկեղեցուն, և Անտիոք է ուղարկվում Բառնաբասը (Գործ. 11:21-22): Վերջինս՝ Ս. Հոգով և հավատով լցված, հորդորում էր ընդունել Աստծո խոսքը (Գործ. 11:23-24): Բառնաբասի և Պողոսի գործունեության շնորհիվ մեկ տարվա ընթացքում Ա-ում քրիստոնյաների թիվը նկատելի ավելանում է (Գործ. 11:25-26): Անտիոք են գալիս մարգարեներ, Երուսաղեմի հավատակից եղբայրների համար կազմակերպվում են նվիրատվություններ (Գործ. 11:27-30): Կարևոր իրադարձություն էր, երբ Ս. Հոգու հրահանգով Պողոսն ու Բառնաբասը մեկնում են հեթանոսներին քարոզելու. «...ծոմ պահելով և աղոթելով՝ ձեռք դրեցին նրանց վրա և ուղարկեցին» (Գործ. 13:1-3), այսինքն՝ Անտիոքի Եկեղեցին ուներ հեղինակավոր ուսուցիչներ և քարոզիչներ: Ըստ Գաղ. 2:11-ի՝ Անտիոք է գալիս և գործունեություն ծավալում նաև Պետրոս առաքյալը: Պողոս առաքյալը Անտիոքից սկսում և այստեղ է ավարտում քարոզչական երկու ճանապարհորդությունները (Գործ. 14:26, 15:36, 18:22): **Պատմական տեղեկությունների համաձայն՝ Անտիոքի Եկեղեցին կարևոր դերակատարում է ունեցել քրիստոնեության պատմության մեջ:**

G. Downey, *A history of Antioch in Syria: from Seleucus to the Arab conquest*, Princeton University Press, 1961.
“The International Standard Bible Encyclopedia”, vol. I, Michigan, 1979, p. 142-143 (Antioch Syrian).
“A Dictionary of the Bible”, edited by James Hastings, M. A., D. D., vol. I, Edinburgh, 1906, p. 103-104.
“The Interpreter’s Dictionary of the Bible”, vol. I, Abingdon Press, Nashville, 1996, p. 145-148.

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(Գործք. 11:19-26)

¹⁹ Այն հավատացյալները, (Նիկողայոս Անտիոքից) որոնք Ստեփանոսի սպանությանը հաջորդած հալածանքի պատճառով ցրվել էին զանազան կողմեր, հասան մինչև Փյունիկե, Կիպրոս և Անտիոք. Եվ ոչ ոքի չէին խոսում Աստծո խոսքը, բայց միայն **Չրէաներին**: ²⁰ Եւ նրանց միջից որոշ մարդիկ՝ կիպրացիներ եւ Կյուրենացիներ, Անտիոք մտնելով, **Չոյներին** էին դիմում՝ ավետարանելով Տէր Յիսուսին: ²¹ Եւ Տիրոջ զօրությունը նրանց հետ էր: Չավատացեալների մի բազմություն դէպի Տէրը դարձավ ²² Նրանց մասին այս լուրը հասավ Երուսաղէմի եկեղեցուն: Եւ **Բառնաբասին** ուղարկեցին մինչեւ Անտիոք: ²³ Երբ սա եկավ եւ տեսավ Աստծու շնորհը, ուրախացավ եւ հորդորում էր բոլորին, որպէսզի նրանք հոծար սրտով կապված մնան Տիրոջը. ²⁴ ըստ որում նա բարի, **Սուրբ Չոգով եւ հավատով լցուած մարդ էր**, մի մեծ բազմություն հավատաց Տիրոջը: ²⁵ Ապա Բառնաբասը ելավ գնաց Տարսոն՝ Սողոսին փնտռելու եւ, նրան գտնելով, բերեց Անտիոք: ²⁶ **Ու նրանք երկուսով մի ամբողջ տարի հավաքվում էին եկեղեցու մէջ եւ ուսուցանում էին շատ շատերին**: Եւ առաջին անգամ Անտիոքում էր, որ աշակերտածներին «**քրիստոնէաներ**» անվանեցին:

(Գործք. 13:1-4)

¹ Անտիոքում գտնուող եկեղեցում կային մի քանի մարգարէներ եւ ուսուցիչներ՝ Բառնաբասը եւ Շմավոնը, Դուկիոսը, Մանայենը, Սողոսը: ² Մինչ նրանք Տիրոջ պաշտամունքի մէջ էին եւ ծոմ էին պահում, **Սուրբ Չոգին ասաց նրանց**. «Բառնաբասին եւ Սողոսին առանձնացրէք ինձ համար, որ անեն այն գործը, որին ես դրանց **կոչել եմ**»: ³ Այն ժամանակ ծոմ պահելով եւ աղօթելով՝ ձեռք դրեցին նրանց վրայ եւ ուղարկեցին: ⁴ Ուստի նրանք, **Սուրբ Չոգուց ուղարկուած**, իջան Սելեւկիա ու այնտեղից նաւարկեցին դէպի Կիպրոս:

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ.

Christianos - Christian, a follower of Christ.

Christos is the non-Greek version of a common Greek given name which is spelled in two ways: "Χρίστος", Chrīstos, from the adjective "χριστός", christos, i.e., "**anointed**" (or "**chosen one**" as is the Christian theological term for the Messiah).

ԱՆՏԻՈՔ ԱՆՎԱՆ ԾԱԳՈՒՄԸ.

Antioch - Անտիոք - Անտիոքոս I Երվանդունի

The **Orontids** established their supremacy over Armenia around the time of the Scythian and Median invasion in the 6th century BC. Antiochus was half Armenian, a distant member of the Orontid Dynasty^[2] and half Greek. (<https://en.m.wikipedia.org/wiki/Armenians>).

1. ԱՍՏՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԵՒ ՀԱՎԱՏՔՈՎ ԼՑՎԱԾ ՄԱՐԴԻԿ:

- ²⁴ ըստ որում նա բարի, **Սուրբ Հոգով եւ հավատով լցուած մարդ էր**, մի մեծ պազմություն հավատաց Տիրոջը:
- Գործ. 6:3 - Հիմա, եղբայրներ, ձեզանից եօթը վկայուած մարդիկ ընտրեցէք, Սուրբ Հոգով եւ իմաստութիւնով լցուած, որոնց այս պիտոյքի վերայ դնենք:

2. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍԱՑ ՆՐԱՆՑ, ԵՐԲ ՆՐԱՆՔ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԵՒ ԾՈՍԻ ՄԵՋ ԷՒՆ:

- ² Մինչ նրանք Տիրոջ պաշտամունքի մէջ էին եւ ծոմ էին պահում, **Սուրբ Հոգին ասաց նրանց**.

3. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ՆՐԱՆՑ:

- **Սուրբ Հոգին ասաց նրանց**. «Բառնաբասին եւ Սօղոսին առանձնացրէք ինձ համար, որ անեն այն գործը, որին ես դրանց **կոչել եմ**»:

4. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՒՂԱՐԿԵՑ ՆՐԱՆՑ:

- ⁴ Ուստի նրանք, **Սուրբ Հոգուց ուղարկուած**, իջան Սելեւկիա ու այնտեղից նաւարկեցին դէպի Կիպրոս:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսօր ինչ կարող ենք անել մեր Անտիոքում, այսինքն մեր քաղաքում (Սակրամենտոյում):

